HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ ԱՆՑԱԾ 30 ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ ԱՆՑԱԾ 30 ՏԱՐԻՆԵՐԻՆ

Լուսինե Խառատյան

Գայանե Շագոյան

Այս հոդվածում արտահայտված մտքերը
հեղինակներինն են և չեն արտահայտում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի տեսակետը:

Շապիկի լուսանկարի հեղինակ՝ Լևոն Աբրահամյան

HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՆՑՅԱԼԻ ՄԵՐԺՈՒՄ և
ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ (1992-1998 ԹԹ.) 6

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ (ԱՐՑԱԽՅԱՆ) ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՐԱ
ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ, ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏՈՒՄ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԵՋ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ (1998-2008 ԹԹ.) 11

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ
ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՎՐԱ ԱՎԵԼԻ ՄԵԾ
ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ (2008-2018 ԹԹ.) 15

ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ.
ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ
«ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԼՈՒՐՆԵՐ» (2018 Թ?-ՄԻՆՉ ՕՐՍ) 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 25

ՀՂՈՒՄՆԵՐ 26

Հիշողության՝ տարիներ շարունակ ընդլայնվող հետազոտությունները բազմիցս արձանագրել են, թե ինչպես են հիշողության [Connerton, 1989; Assman, 2006, Alexander, 2004, 2012; Eyerman, 2004] և լռեցման/մոռացման [Ankersmit, 2003; Connerton, 2009; Assman, 2019; Эполе, 2020] քաղաքականություններն ազդել ազգային ինքնությունների ձևավորման և փոխակերպման վրա: Այս խնդիրները հատկապես արդիական են դառնում քաղաքական կտրուկ ցնցումների ժամանակ և հանգեցնում են անցյալի քննադատական վերանայման: Այսպիսով, Խորհրդային համակարգի փլուզման արդյունքում նորանկախ հանրապետությունները ստիպված էին զբաղվել ոչ միայն իրենց ապագայի, այլև անցյալի կառուցման խնդրով:

Հայաստանում հիշողության քաղաքականությունն ու հիշողության լանդշաֆտը հիմնականում հիմնված են երկրի անկախությանը նախորդած և դրան հանգեցրած գործընթացների, ինչպես նաև անկախության հաստատումից հետո իշխանության եկած կուսակցությունների քաղաքական գաղափարախոսության ու հռետորաբանության վրա, որոնք և իրենց համապատասխան հետևանքներն են ունեցել ինքնության կառուցման և պետականաշինության վրա: Թեև քաղաքականությունը հիմնված էր թե՛ վերընթաց և թե՛ վարընթաց գործընթացների վրա, այս հետազոտությունը հիմնականում անդրադառնում է վերիցվար պրակտիկաներին:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության հիշողության քաղաքականությունը 1991-2021 թթ. բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով.

- Ղարաբաղյան շարժման ընթացքում առաջ մղվող ազգային խոսույթների և պատումների հենքով և հիմնականում ազգային պետության կառուցման գաղափարների շուրջ ձևավորվելով, իսկ հետագայում նաև ղարաբաղյան հակամարտության շուրջ ընթացող զարգացումների շնորհիվ ամրապնդվելով՝ այն զարգացել է միագիծ ազգային պատումի շուրջ՝ քիչ տեղ թողնելով այլընտրանքային հիշողության համար:

- Արդեն որոշակի փոխակերպումներով և ղարաբաղյան հակամարտության հետ միահյուսմամբ՝ Ցեղասպանության հիշողությունն (Marutyan, 2009) ընդհանուր առմամբ, գերիշխել է հիշողության քաղաքականության մեջ և հիշողության լանդշաֆտում՝ իր ազդեցությունը թողնելով ինչպես հուշարձանների և հուշահամալիրների, այնպես էլ կրթության և այլնի վրա: Լռեցվելով վաղ խորհրդային շրջանում ՝ ցեղասպանության հիշողությունը շարունակել է իր գոյությունը որպես լատենտ հիշողություն, և 1965 թ. ի վեր, վերափոխվել է հավաքական և անգամ մշակութային տրավմայի (Eyerman, 2004, Alexander, 2004; Шагоян, 2021): ԽՍՀՄ-ի փլուզումից հետո

այն վերաճել է գերիշխող պատումի (հմմտ. Alexander 2004:12-15)՝ ազդելով հիշողությանն առնչվող այլ պրակտիկաների վրա: Այն մինչ օրս շարունակում է մնալ հիշողության առօրեականացման/ինստիտուցիոնալացման փուլում (Alexander, 2012):

- Համապատասխան օրենսդրությունը և քաղաքականությունները, այդ թվում՝ պաշտոնական տոնացույցը, տեղանունները, հուշարձաններն ու հուշահամալիրները, կրթական չափորոշիչներն ու ծրագրերը, արդյունավետորեն օգտագործվել են՝ պաշտոնական պատումը պարտադրելու համար:
- Չնայած այս ամենին՝ եղել են տեղական նախաձեռնություններ, որոնք որոշ հաջողություն են արձանագրել պաշտոնական մոտեցմանը հակադրվելու, ինչպես նաև այլընտրանքային պատումներ ստեղծելու գործում:

Ընդհանուր առմամբ, հիշողության քաղաքականության մեծ ու փոքր տեղաշարժերը և փոփոխությունները կարելի է կապել Հայաստանի ղեկավարներ Լևոն Տեր-Պետրոսյանի (1991-1998 թթ.), Ռոբերտ Քոչարյանի (1998-2008 թթ.), Սերժ Սարգսյանի (2008-2018 թթ.) և Նիկոլ Փաշինյանի (2018-այժմ) ժամանակաշրջանների հետ: Սկզբում ժողովրդից սնվող, հանրային գիտակցության մեջ արմատավորված և խորհրդային ժամանակաշրջանում լռեցված՝ Հայաստանի հիշողության քաղաքականությունն այնուհետև նյութականացավ համապատասխան օրենսդրության և քաղաքականությունների տեսքով և դրանցից բխող գործողություններով:

Հաջորդիվ, մենք դիտարկում ենք այս փուլերից յուրաքանչյուրը՝ հետևյալ տեսանկյունից.

ա) փոփոխվող հիշողության լանդշաֆտը, այդ թվում՝ տեղանունների անվանակոչման և անվանափոխման պրակտիկաները, որոշ հին հուշարձանների քանդումը և նորերի տեղադրումը, հուշահամալիրների ու թանգարանների առկայությունը,

բ) պաշտոնական տոներն ու հիշատակի օրերը,

գ) պատմության ուսուցումն ու հանրային խոսույթը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՆՑՅԱԼԻ ՄԵՐԺՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ (1992-1998 ԹԹ.)

Գորբաչովյան «վերակառուցման» («Պերեստռոյկայի») շրջանում՝ 1988 թ., սկիզբ առած Ղարաբաղյան շարժումը հարթեց Հայաստանի անկախությանը տանող ճանապարհը և, ըստ էության, դրեց ազգային պետության կառուցման հիմքերը: Վերաճելով ժողովրդական և ժողովրդավարական նախաձեռնության, Հայոց Համազգային Շարժումը (ՀՀՇ) դարձավ քաղաքական կուսակցություն, որը ձայների մեծամասնությամբ հաղթեց 1990 թ. խորհրդարանական (Գերագույն խորհրդի) ընտրությունները և հռչակեց ԽՍՀՄ-ից Հայաստանի անկախությունը 1990 թ. օգոստոսի 23-ին: Այս իրադարձություններին հաջորդեց 1991 թ. սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեն, որից հետո ՀՀՇ-ի առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրվեց Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ: ԽՍՀՄ-ի վերջին տարիներին Շարժման հիմնական պահանջը մեծամասամբ հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղի մարզի փոխանցումն էր Ադրբեջանական ԽՍՀ-ից Հայկական ԽՍՀ-ին: Շարժման վերլուծությանն ուղղված աշխատությունները (Marutyan, 2009; Abrahamian, 2006) ցույց են տալիս, թե ինչպես են ժամանակաշրջանի իրադարձությունները (օրինակ՝ Սումգայիթի ջարդերը), արթնացրել և ակտիվացրել Հայոց ցեղասպանության մասին հիշողությունը: Ըստ Հ. Մարությանի՝ այս հիշողությունն օգնել է մարդկանց ձերբազատվել խորհրդային ներկայի հարացույցներից, ազատվել խորհրդային քարոզչության կապանքներից և հիմք է դարձել Հայաստանի անկախությանը հանգեցնող հեղափոխական փոխակերպումների համար:

Անկախության սկզբից ևեթ 1915 թ. հայոց ցեղասպանությունը դարձավ հիշողության քաղաքականության հիմնական հենասյուներից: Անկախության հռչակագիրն ինքնին հատուկ դրույթ ունի, որի համաձայն «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»՝ հաստատելով հիշողության քաղաքականության երկու կարևորագույն հիմնասյուները՝ ցեղասպանությունը և Արևմտյան Հայաստանը: 1995 թ. հիմնվեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը: Այսպիսով, 1915 թ. ցեղասպանությունը դարձավ հայոց պատմության գերակա պատումը (Shagoyan, 2016):

Հայաստանի անկախության շարժման բնույթը՝ ներառյալ Խորհրդային Միությունից անջատվելու նպատակը, ինչպես նաև Ղարաբաղյան հակամարտության շուրջ աճող լարվածությունը, նպաստեցին, որ 1990-ականների սկզբի հիշողության քաղաքականությունը հիմնականում

ուղղվի խորհրդային անցյալի դրսևորումների, ինչպես նաև Հայաստանում ադրբեջանական/թուրքական առկայության հիշողության ջնջմանը, այդ թվում՝ տեղանունների փոփոխությանը, մի շարք հուշարձանների ապամոնտաժմանը,[1] ոչ ներառական պատումների ստեղծմանը: Միևնույն ժամանակ հիշողության նոր քաղաքականությունը վերականգնում և հիշողության մաս էր դարձնում Հայաստանի պատմության այն դրվագները, որոնք անտեսվել և/կամ փոփոխվել էին խորհրդային իշխանությունների կողմից՝ այսպիսով դնելով նոր ազգային պետության կառուցման հիմնաքարերն ու գաղափարախոսական հիմքերը: Ինչպես և շատ այլ հետխորհրդային պետություններում, ժամանակի հայաստանյան պատմագրությունը ներկայացնում էր մի պատկեր, որտեղ Հայաստան պետության զարգացումն ընդհատվում էր խորհրդայնացմամբ, և դրանից հետո այն շեղվում էր շիտակ ուղուց՝ վտանգելով ազգային ինքնությունը: Արդյունքում, պատմության հնագույն շրջանն արժանացավ հանրության ուշադրությանը և հայտնվեց հանրային քննարկումների կիզակետում: 1991 թ. հոկտեմբերին պետական մակարդակով նշվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյակը: Նախագահ Տեր-Պետրոսյանն այս կապակցությամբ հանդես է գալիս ելույթով, որում արժևորում է Խորենացու աշխատանքն ազգային պատմագրության հիմքերի ստեղծման տեսանկյունից. «Եւ այստեղ կարեւոր չէ, թե որ նախարարական տոհմի հետ է Խորենացին կապում Հայոց պետականության վերականգնման առաքելությունը, կարեւորն ու հիմնականն այն է, որ նա հայ ժողովրդի կեցությունը չի պատկերացնում առանց ազգային պետականության գոյության»:[2]

Խորհրդային անցյալը վերացնելու ուղղությամբ առաջին ուղենիշային իրադարձությունը Երևանի կենտրոնական հրապարակում տեղադրված Լենինի արձանի ապամոնտաժումն էր 1991 թ. փետրվարին, որին հետևեցին Հայաստանի այլ բնակավայրերում նմանատիպ գործողություններ: Միևնույն ժամանակ նախաձեռնվեց տեղանունների փոփոխության գործընթացը: Հայաստանում տեղանունների փոփոխությունը, այդ թվում՝ քաղաքային և գյուղական բնակավայրերի վերանվանումը, ինչպես նաև բնակավայրերի ներսում փողոցների և տեղավայրերի անվանումների փոփոխությունը, մեկնարկել էր դեռևս 1990 թ. և ներառում էր ոչ միայն կոմունիստական գաղափարախոսությամբ պարտադրված տեղանունները, այլ նաև ոչ հայկական և հիմնականում թուրք-ադրբեջանական տեղանունները (Kharatyan, 2008): Սրա վառ օրինակն է Երևան քաղաքի կենտրոնական փողոցների վերանվանումը, որը ցույց է տալիս թե՛ կոմունիստական անցյալի ջնջումը, թե՛ վաղ անցյալի վերականգնումը:[3] Այս նպատակով ստեղծվեց պատմաբաններից, ազգագրագետներից, լեզվաբաններից և այլ մասնագետներից կազմված հատուկ հանձնաժողով: Հանձնաժողովի առաջարկած և քաղաքականություն իրականացնողների ընդունած հայեցակարգի հիմքում ընկած էր Երևանի կենտրոնում հայոց Ոսկեդարի (5-րդ դարի) վերակառուցման գաղափարը, որով խորհրդանշաբար վերահաստատվում էր կապը հայոց պատմության ամենակարևոր և ինքնասահմանող

1. Վաղ փուլերում այսպիսի զարգացումների օրինակ է ադրբեջանցի բոլշևիկ Մեշադի Ազիզբեկովի արձանի (1932 թ.) հանումը Ազիզբեկովի հրապարակից դեռ 1988 թ., ապա այդ հրապարակի վերանվանումը Անդրեյ Սախարովի և հետագայում Ազիզբեկովի արձանի տեղում Սախարովի արձանի կանգնեցումը (2001 թ.):

2. Լևոն Տեր-Պետրոսյանի խոսքը պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր նիստում (1991 թ.):

3. Տեղեկատվությունը տրամադրվել է Հանձնաժողովի անդամ, ազգագրագետ Զավեն Խառատյանի կողմից:

ժամանակաշրջանի՝ գրերի գյուտի և դրան հաջորդած ազգային վերածննդի հետ, երբ բազմաթիվ գրքեր են գրվել ու թարգմանվել հայերեն: Ըստ առաջարկված մոտեցման՝ կոմունիստական առանցքային առաջնորդների անուններով կոչված կենտրոնական փողոցները վերանվանվեցին Մաշտոցի և նրա աշակերտների անուններով՝[4] խորհրդանշական կերպով դնելով նորանկախ հանրապետության գաղափարական հիմքերը:[5]

Հայաստանի վարչական և այլ աշխարհագրական միավորների ներկայիս անվանումները վերլուծելով՝ մի շարք հետազոտողներ առանձնացնում են վերանվանման/անվանման հետևյալ տեսակները՝ «վերականգնում», «նոր հնչողության հաղորդում», «պատճենում կամ թարգմանություն» և «վերստեղծում» (Dabagyan, 2011): «Վերականգնված» անվան օրինակ է Հայաստանի մեծությամբ երկրորդ քաղաքի անվանումը՝ Լենինական: Այն վերանվանվեց Կումայրի 1990-1992-ականներին, իսկ հետո 1992 թ. մարտի 13-ին վերակոչվեց Գյումրի: Թե՛ Կումայրին, թե՛ Գյումրին այդ բնակավայրի հին պատմական անվանումներն են, որոնք վերականգնվեցին անկախությունից հետո: Հայկական անվանումների մեծ մասը պահպանվեց, ինչպես նաև պահպանվեցին այն բնակավայրերի և/կամ փողոցների անունները, որոնք ասոցացվում են հայկական ծագում ունեցող կոմունիստների հետ, օրինակ՝ Ստեփանավանը, որն անվանվել էր Բաքվի 26 կոմիսարների առաջնորդ Ստեփան Շահումյանի պատվին:[6] Միաժամանակ նախկին ադրբեջանական բնակավայրերի որոշ անուններ պարզապես թարգմանվեցին հայերեն, մինչդեռ որոշների համար նոր անուններ ստեղծվեցին: Այնուամենայնիվ, մոտեցման հիմքում մեծամասամբ ընկած էր անվանումների «հայկականացումը»՝ այսպիսով փոփոխելով հիշողության լանդշաֆտը հայկական ազգային պետության կառուցման համար: Ամփոփելով ՝Ամփոփելով՝ նշենք, որ խորհրդային հուշարձանների մեծ մասը, ինչպես նաև խորհրդային և ընդհանրապես ոչ հայկական անվանումները վերացվեցին այս ժամանակահատվածում:

Սա նաև այն ժամանակահատվածն էր, երբ գրեթե բոլոր խորհրդային տոները և հիշատակի օրերը վերացվեցին, և ընդունվեց նոր տոնացույց: Ուշագրավ է, որ Ղարաբաղյան պատերազմի առանցքային իրադարձություններից մեկը՝ 1992 թ. Շուշիի ազատագրումը, համընկավ մայիսի 9-ի հետ, որն ավանդաբար տոնվում էր որպես նացիստական Գերմանիայի դեմ Խորհրդային Միության հաղթանակի օր: Այսպիսով, թեև օրը մնաց օրացույցում, այն նոր իմաստ ստացավ և այդ ժամանակից ի վեր տոնվում էր որպես «Հաղթանակի և խաղաղության օր»:[7] Հետխորհրդային երկրների հիշատակի լեզուն հաճախ դիմում էր ԽՍՀՄ-ում

4. Լենինի պողոտան՝ Երևանի կենտրոնական/գլխավոր պողոտան, վերանվանվեց Մաշտոցի պողոտայի, իսկ մնացած բոլոր ուղղահայաց, կոմունիստական անուններ կրող փողոցները վերանվանվեցին Մաշտոցի աշակերտների անուններով, այդ թվում՝ Կիրովը վերանվանվեց Կորյունի, Մարքսը՝ Խորենացու, Սվերդլովը՝ Բուզանդի, Տեր-Գաբրիելյանը՝ Կողբացու և այլն: Հետաքրքրական է, որ Հայաստանի շատ այլ քաղաքներում Լենինի պողոտաները հետևեցին Երևանում տեղի ունեցածի օրինակին՝ վերանվանվելով Մաշտոցի:

5. Երևանում վերանվանված փողոցների ամբողջական ցանկը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.yerevan.am/uploads/media/default/0001/29/8d73ca144990a63c4cda3afa2b2fe9740d6bf84a.pdf:

6. Հայկական ծագման ականավոր կոմունիստների անունները հիմնականում պահպանվել են, շատ դեպքերում այնպիսի հիմնավորումներով, որ «նրանց գործունեությունը հայամետ է եղել», և «նրանք շատ լավ բաներ են արել հայերի համար», ինչը կրկին վերանվանման ազգային բնույթի ևս մի ապացույց է:

7. Մայիսի 9-ն ընկալվում և կոչվում էր «եռատոն», երբ տոնվում էին Երկրորդ համաշխարհային պատերազմում Խորհրդային Միության հաղթանակը, Շուշիի ազատագրումը և Արցախի (Ղարաբաղի) բանակի հիմնումը:

որպես Հայրենական մեծ պատերազմ ճանաչված և հուշարձայնացված Երկրորդ աշխարհամարտի հիշատակի խորհրդային պրակտիկաներին:[8] Սա զուտ պատերազմի ժամանակ ԽՍՀՄ բնակչությանը մոբիլիզացրած իրադարձություն չէ: Նույն պատումները լայնորեն կրկնվել են թե՛ կրեմլյան իշխանության, թե՛ առանձին հանրապետությունների իշխանությունների կողմից ոչ միայն խորհրդային, այլև հետխորհրդային շրջանում: Այս պատերազմի հիշողությունը ոչ միայն պաշտոնական, այլև ընտանեկան պատմությունների մաս է կազմում: Սա այն եզակի դեպքերից է, երբ ռուսական իշխանությունները 2015 թ. հեշտությամբ յուրացրեցին և ձևափոխեցին Տոմսկում 2011 թ. տեղական բնակչության նախաձեռնած հիշատակի նախաձեռնությունը՝ այն դարձնելով համազգային Հաղթանակի օրվա տոնակատարություն («Անմահ գնդի» երթը) (Эпплe, 2020: 260-261):[9]

Այսպիսով, մայիսի 9-ը միակ խորհրդային տոնն էր, որը ներառվել էր անկախ Հայաստանի նոր պաշտոնական տոնացույցում: Տոնացույցն ուներ ընդամենը ութ պաշտոնական ոչ աշխատանքային տոն/հիշատակի օր, որոնցից երեքը կապված էին անկախության հետ, այդ թվում՝ մայիսի 28-ը՝ Առաջին հանրապետության օրը ի հիշատակ 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման, Սահմանադրության օրը, որը տոնվում է հուլիսի 5-ին՝ ՀՀ նոր սահմանադրության ընդունման օրը, և սեպտեմբերի 21-ը՝ Անկախության օրը, 1991 թ.անկախության հանրաքվեի օրը: Երկուսը հիշատակի օրեր էին. ապրիլի 24-ը՝ ի հիշատակ 1915 թ. ցեղասպանության զոհերի և դեկտեմբերի 7-ը՝ ի հիշատակ 1988 թ. երկրաշարժի զոհերի: Քանի որ մարտի 8-ը շատ սիրված տոն էր Խորհրդային Միությունում, որն ընդհանրապես տոնվում էր որպես առհասարակ Կանանց օր, Հայաստանի նոր կառավարությունը կանանց համար նոր տոն սահմանեց՝ «Մայրության և գեղեցկության տոնը», որը տոնվում էր ապրիլի 7-ին: Ինչպես իր աշխատանքում ցույց է տալիս Ալեյդա Ասսմանը, մոռացումը հիշողության քաղաքականության անքակտելի մաս է (Assman, 2019), իսկ խորհրդային տոների նմանությամբ այսպիսի տոների ընդունումը կրկնագրի գործառույթ ունի, երբ հին տեքստը ջնջելու համար նոր տեքստը դրվում է ավելի վաղ քերված-մաքրվածի վրա: Տոների դեպքում՝ նոր տոնը ստեղծվում է հնի գործառույթները շահագործելու նպատակով:

Այնուամենայնիվ, մինչդեռ խորհրդային ժառանգությունը նպատակաուղղված կերպով ջնջվում էր հանրային տարածքից, պատմությունն ու պատմագրությունն ամբողջությամբ հիմնվում էր պատմագրության խորհրդային դպրոցի վրա: Ավելին, ինչպես իրավացիորեն նկատել են Զոլյանն ու Զաքարյանը.

8. Խորհրդային Միությունում «Հայրենական մեծ պատերազմը» ԽՍՀՄ-ի կողմից 1941-45 թթ. նացիստական Գերմանիայի դեմ մղված պատերազմի անվանումն է:

9. Նույնն ընդօրինակեցին ադրբեջանական իշխանությունները Ղարաբաղյան 44-օրյա պատերազմից մեկ տարի անց՝ նոյեմբերի 9-ին, այս պատերազմում իրենց Հաղթանակի օրը նշելով: Բացի այդ, Մոսկվայում Ադրբեջանի դեսպանատան կազմակերպած միջոցառման հրավերում պատերազմն անվանվել էր «Հայրենական», ինչը լայնորեն քննարկվեց և դատապարտվեց Հայաստանում՝ որպես ագրեսորի և հարձակման ենթարկվածի տեղերը փոխելու փորձ: Ինչ վերաբերում է հիշատակի քաղաքականությանը, ապա Երկրորդ համաշխարհային պատերազմում «հաղթանակի օրվա» խորհրդանշաններին այս հղումները ցույց են տալիս, թե որքան խորն են յուրացվել խորհրդային հիշատակի պրակտիկաները, և, մյուս կողմից, որքան ուժեղ է մերօրյա Ռուսաստանի հիշատակի քաղաքականությունը, որն օգտագործում է Երկրորդ աշխարհամարտի հիշողությունը՝ որպես ներկայիս ազգային գաղափարախոսության հանգույցներից մեկը, որը դեռևս հանդես է գալիս որպես ընդհանուր կայսերական հիշողություն՝ իր ազդեցությունը տարածելով նախկին սոցիալիստական երկրների վրա:

«հետխորհրդային պետությունների ազգային պատմություններում գերիշխող պատումները «երկնքից չեն ընկել»: Շատ դեպքերում, այդ թվում՝ Հայաստանում, ազգային պատմության պատումների կարևոր առանձնահատկություններն արդեն ձևավորվել էին նախախորհրդային շրջանում: Այս պատումները կամ առնվազն դրանց առանձին տարրերը գոյություն են ունեցել և զարգացել են նաև խորհրդային շրջանում՝ չնայած պաշտոնական խորհրդային պատմական պատումի գերիշխանության պայմաններում դրանք պետք է հազիվ «ողջ մնային»» (Zolyan & Zakaryan, 2008): ԽՍՀՄ-ում խորհրդային հանրապետությունների պատմական պատումները մեծապես հիմնվում էին ստալինյան ազգային քաղաքականության վրա, երբ տասնհինգ խորհրդային հանրապետություններից յուրաքանչյուրը հնարավորություն ուներ մշակել իր «ազգային պատմությունը»: Պատումները խոսույթի իմաստով նման էին իրար. դրանք սկսվում էին ազգի էթնոգենեզով, որին հաջորդում էր ազգային գիտակցության ձևավորումը և ազգային ազատագրական պայքարը, որն էլ հանգեցնում էր դասակարգային գիտակցության ձևավորմանը, ինչն էլ, իր հերթին, տանում էր դեպի հասարակության կազմակերպման ավելի լավ ձևի՝ կոմունիզմի (Bilmez et al, 2017):

Ըստ էության խորհրդային շրջանում ձևավորված ազգային պատմության պատումները, համալրվելով այդ շրջանում լռեցված մի շարք այլ ազգային պատումներով, դարձան ազգային զարթոնքի հիմքը: Դրանք նաև գերիշխում կամ ուղղորդում էին 1980-ականների վերջի 1990-ականների սկզբի հանրային խոսույթի մեծ մասը և հիմք դարձան դասագրքերի «ազգակենտրոն» պատմության ձևավորման համար՝ ակադեմիական շրջանակներում և հետխորհրդային Հայաստանի հանրային խոսույթի այլ ոլորտներում պատմության ազգայնացման ընդհանուր համատեքստում (Matosyan, 2013): Մինչդեռ հետխորհրդային Հայաստանի առաջին կառավարությունը փորձում էր պատմության դասավանդումից դուրս մղել կոմունիստական գաղափարախոսությունը, պատմության դասագրքերի տպագրությունն ու դրանց բովանդակությունը երաշխավորվում էր պետության կողմից, և դասագրքերի բովանդակությունը սահմանող նոր գաղափարախոսական չափանիշները համապատասխանեցվել էին ողջ հետխորհրդային տարածքում դիտվող «ապագաղափարայնացման» և «վերագաղափարայնացման» (կամ «ազգայնացման») ընդհանուր միտմանը (Matosyan, 2013): Հայաստանում ինքնության փոխակերպման այս հետ-սոցիալիստական միտումը որոշ չափով տարբերվում է Արևելյան Եվրոպայի և նախկին խորհրդային հանրապետությունների մեծ մասի ինքնանկարագրման հետգաղութատիրական եղանակից, թեև դրանք բոլորն էլ ազգայինին կողմնորոշված ինքնություններ կերտելու միտում ունեն՝ միահյուսված ռոմանտիկ պահպանողականությանը (հմմտ. Kalinin, 2021: 192): Արդյունքում հիշողության ամենակարևոր կետերը սկզբնավորվեցին միապատում պատմական խոսույթից, իսկ ազգայնականությունն աստիճանաբար դարձավ հիշողության քաղաքականության հիմնական հենասյունը Հայաստանի անկախության արդեն իսկ վաղ փուլերում:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ (ԱՐՑԱԽՅԱՆ) ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՐԱ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ, ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏՈՒՄ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ (1998-2008 ԹԹ.)

ՀՀՇ-ի իշխանության շրջանի վերջում խորհրդային անվանումների և հուշարձանների մեծ մասն արդեն անհետացել էր հանրային տարածքից: Այնուամենայնիվ, թեև տեղանունների փոփոխությունները տեղի էին ունենում անկախության հենց ամենաառաջին օրերից, «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքն ընդունվեց միայն 1999 թ.-ին: Օրենքն աշխարհագրական օբյեկտների անվանափոխում նախատեսում էր հետևյալ դեպքերում.

ա) առանձին օբյեկտների պատմական անունները վերականգնելիս,

բ) օտար, անբարեհունչ և կրկնվող անունները վերացնելիս,

գ) աշխարհագրական անունները կանոնավորելիս:

Առաջին երկու դեպքերն ակնհայտորեն շարունակում են «հայկականացման» քաղաքականությունը, քանի որ գերակշռող մեծամասնության դեպքում վերականգնված անունները ենթադրաբար հին հայկական անվանումներ են, իսկ «օտար» և «անբարեհունչ» անվանումները նույնպես հիմնականում փոխարինվել են հայկական անվանումներով:

2001 թ. ուժը կորցրած է ճանաչվում «Տոների և հիշատակի օրերի մասին» 1996 թ. օրենքը, և ընդունվում է նոր օրենք: Նոր օրենքով մեծացավ ռազմական և եկեղեցական ներկայությունը, ինչպես նաև վերականգնվեցին մի շարք խորհրդային տոներ: Սա կարելի էր մասամբ բացատրել Հայաստանի նոր ղեկավարության անցած ուղով. Ռ. Քոչարյանը և նրա թիմակիցներից ոմանք Լեռնային Ղարաբաղից էին և պատերազմի ընթացքում անմիջական պատասխանատվություն էին կրել ԼՂ-ի համար: Ի տարբերություն ՀՀՇ-ի ղեկավարության և Ղարաբաղ կոմիտեի անդամներից շատերի, որոնցից ոմանք խորհրդային շրջանում այլախոհներ էին՝ Քոչարյանն ու իր թիմը Կոմունիստական կուսակցության կամ Կոմսոմոլի առաջնորդներ կամ անդամներ էին եղել

խորհրդային տարիներին: Այսպիսով, նոր տոնացույց վերադարձվեց մարտի 8-ը՝ որպես կանանց տոն, սակայն նորաստեղծ ապրիլի 7-ը նույնպես մնաց տոնացույցում:[10] Մայիսի 1-ը՝ Աշխատավորների օրը, նույնպես վերադարձվեց տոնացույց՝ որպես ոչ աշխատանքային տոնական օր: Այնուամենայնիվ, ավելի կարևոր էր, որ այս երկու խորհրդային տոներն իրենց հիմնավոր տեղն էին գտել մարդկանց օրացույցում. մարտի 8-ը՝ այս օրը տեղի ունեցող նվերների փոխանակման շնորհիվ, ինչը պարտավորության զգացում էր ստեղծել նվերներ փոխանակող կողմերի մոտ, իսկ մայիսի 1-ը ներառվել էր գարնանային տոնացույցում և այնքան խորն էր արմատավորվել, որ որոշ շրջաններում այդ տոնի հաջորդ օրն ավանդական մեռելոց էր դարձել՝ գերեզմանների այցելություններով:[11] Այդ իսկ պատճառով այս երկու տոները, անգամ եթե դրանք դուրս էին թողնվել պաշտոնական տոնացույցից, շարունակում էին ինչ-որ կերպ տոնվել, և այսպիսով, լրամշակումների արդյունքում օրենքը համապատասխանեցվեց առկա պրակտիկային:

Տոնացույցին ավելացվեցին հունվարի 28-ը և մայիսի 8-ը, առաջինը՝ Բանակի տոնը, որպես ոչ աշխատանքային օր, իսկ երկրորդը՝ Երկրապահի օրը՝ որպես աշխատանքային օր: Միևնույն ժամանակ, մինչդեռ Ղարաբաղյան (Արցախյան) պատերազմում կռվողների հիշատակին տարբեր հուշարձաններ և հուշակոթողներ Հայաստանում կանգնեցվել են պատերազմի առաջին իսկ օրերից, ընդ որում դրանք թե՛ ժողովրդական, թե՛ պետական նախաձեռնություններ էին, իսկ Ղարաբաղյան (Արցախյան) պատերազմում կռվողների համար նախատեսված Եռաբլուր ազգային հուշահամալիր-պանթեոնի վայրը հիմնվել էր դեռ 1992 թ., սակայն ընդհանուր առմամբ Ղարաբաղյան (Արցախյան) պատերազմում կռվածների ներկայությունը, ինչպես նաև Ղարաբաղյան (Արցախյան) պատերազմի և հայոց զինված ազգային պայքարի հուշարձայնացումը հանրային տարածքում ավելի տեսանելի դարձան 2000-ականների սկզբից, երբ տոնացույցում հուշարձանների հետ կապված հատուկ հիշատակի օրեր ավելացվեցին:

Ժամանակի ընթացքում Եռաբլուրը դարձավ ոչ միայն Ղարաբաղյան (Արցախյան) պատերազմի զինվորների, այլև 20-րդ դարի հայ ազգային ազատագրական պայքարի բոլոր խոշոր գործիչների/դեպքերի հիմնական հուշահամալիրը: 2000 թ. Եռաբլուրում բացվեց Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) անդամների հիշատակին նվիրված հուշահամալիր: 1990-ականների վերջին Հայաստանը նախաձեռնեց 20-րդ դարի հայ ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչների՝ արտասահմանում թաղված աճյունների վերադարձը հայրենիք: Նախ, Հայաստան բերվեց և Եռաբլուրում թաղվեց Սոսե Մայրիկի աճյունը: 1999-2000 թթ.-ին պետական հանձնաժողով ստեղծվեց՝ Անդրանիկ Օզանյանի աճյունի հայրենադարձությունը կազմակերպելու համար: Պաշտպանության նախարարի ղեկավարած հանձնաժողովը բանակցում էր ֆրանսիական իշխանությունների հետ Անդրանիկի աճյունի՝ Ֆրանսիայից Հայաստանին փոխանցելու վերաբերյալ

10. Այդ ժամանակ մարտի 8-ը ոչ աշխատանքային օր էր, այնինչ ապրիլի 7-ն աշխատանքային էր:

11. Հայկական ավանդույթում եկեղեցու տաղավար տոներին սովորաբար հաջորդում էր մեռելոցը, երբ հաջորդ օրը մարդիկ այցելում են գերեզմանոցներ՝ հիշատակի տուրք տալու ընտանիքի հանգուցյալ անդամներին: Թեև եկեղեցական տոներն արգելված էին խորհրդային շրջանում, տոների հաջորդ օրը գերեզմանոց այցերը չեն դադարել անգամ խորհրդային ժամանակներում:

և, ի վերջո, աճյունը տեղափոխվեց Երևան և հուղարկավորվեց Եռաբլուրում 2000 թ.-ին:

Այս տարիներին Հայ առաքելական եկեղեցին ընդհանուր առմամբ ավելի տեսանելի դարձավ հիշողության լանդշաֆտում: Մինչդեռ նախորդ օրենքն ընդամենը նշում էր, որ մի շարք ավանդական և եկեղեցական տոներ և հիշատակի օրեր նույնպես կարող են տոնվել Հայաստանի Հանրապետությունում, նոր օրենքը հատուկ թվարկում էր դրանցից մի քանիսը: Ուշագրավ է, որ Վարդանանց տոնը, որը նվիրված է 5-րդ դարում տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտի զոհերի հիշատակին,[12] ներառվել էր ցանկում՝ այսպիսով բանակն ու եկեղեցին միավորելով մեկ տոնի մեջ: Այնուամենայնիվ, այս միությունը վկայում է ոչ այնքան հետխորհրդային շրջանում կրոնականության աճի մասին, որքան արտացոլում է Հայ առաքելական եկեղեցու կոնկրետ տեղը հայկական ազգային գաղափարախոսության մեջ, որտեղ դավանանքն առաջին հերթին ընկալվում է որպես պետականաշինության ինստիտուտներից մեկը (որպես դավանանք, որը միավորել է էթնիկ հայերին պատմության՝ պետականությունից զուրկ տևական շրջանում և որպես ինտիտուտ, որը միավորում է տարբեր երկրների հայկական սփյուռքը): Եվ այստեղ խոսքը ոչ թե ազգայնականության՝ առանձնահատուկ կրոնական ձևի դիրքավորման, այլ ավելի շուտ կրոնի՝ որպես ազգայնականության բաղադրիչի հանդեպ վերաբերմունքի մասին է՝ փոխներթափանցման և միահյուսման իրեն հատուկ եղանակներով (հմմտ. Brubaker 2011): 1999 թ.-ին բացվեց Եռաբլուրի Սուրբ Վարդանանց նահատակաց մատուռը: Ավելին, Եռաբլուրի հիմնադրման օրը՝ 1992 թ. մայիսի 26-ը, Ավարայրի ճակատամարտի օրն էր, ինչը հուշում է, որ Վարդանանց պատումը իրականում ներմուծվել է դեռևս 1992 թ., իսկ հայկական սփյուռքի բազմապիսի հաստատություններում (դպրոցները, քաղաքական կուսակցությունները, ակումբները, եկեղեցիները) այն մշտապես տոնվել և տոնվում է այսօր:

2001 թ. Հայաստանում տոնվում է քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակը: Սա այս շրջանում իրականացված հիշատակի խոշոր միջոցառում էր: Հոբելյանական այս առիթով Երևանում կառուցվում է Գրիգոր Լուսավորիչ նոր եկեղեցին, որն ի վերջո դարձավ Երևանի քաղաքային համայնապատկերի ամենախոշոր և գերիշխող եկեղեցին:[13] Բացի այդ, 1700-ամյակի տոնակատարությունների շրջանակում 2001 թ. մի մեծ խաչ կանգնեցվեց Երևանի կենտրոնական հրապարակում, Լենինի արձանի պատվանդանի վրա (Abrahamian 2003, 2012):[14] Այս տարելիցը՝ եկեղեցու

12. Ավարայրի ճակատամարտը, որն, ըստ ընկալումների, Հայաստանում քրիստոնեության պաշտպանության նպատակով տեղի ունեցած խոշորագույն ճակատամարտ էր, տեղի է ունեցել 451 թ. մայիսի 26-ին քրիստոնյա հայոց բանակի և Սասանյան Պարսկաստանի միջև: Այն Հայոց պատմության ամենակարևոր/վճռորոշ իրադարձություններից մեկն է: Ճակատամարտի մասնակիցներին անվանում էին Վարդանանք՝ հայոց բանակի սպարապետ Վարդան Մամիկոնյանի անունով, այնինչ պայքարն ինքնին կոչվում էր «Վարդանանց պատերազմ»: Ավարայրի ճակատամարտը 1919 թ. ներառվեց Հայաստանի առաջին Հանրապետության պաշտոնական ազգային տոնացույցում և հետո 2001 թ. վերաներառվեց Երրորդ հանրապետության տոնացույցում: Այնուամենայնիվ, ըստ այս օրենքի, այն տոնվում է Զատիկից ութ շաբաթ առաջ՝ որպես Սուրբ Վարդանանց տոն կամ բարի գործի և ազգային տուրքի օր: Այսպիսով, այն տոնվում է ոչ թե ճակատամարտի օրը (մայիսի 26-ին), այլ հիմնականում հունվարի 30 – մարտի 4-ը ընկած ժամանակահատվածում:

13. Թեև շինարարությունը տեղի է ունեցել 1996-2001 թթ., 1700-ամյակի տոնակատարությունների անցկացման, ինչպես նաև հիշատակված եկեղեցու շինարարության մասին որոշումը Եկեղեցու ղեկավարությունը կայացրել է 1989-1990 թթ.:

14. Թեև Լենինի արձանն ապամոնտաժվեց 1991 թ., պատվանդանը մնաց մինչև 2006 թ.:

սիմվոլիկ նշանակության աճին զուգահեռ, Հայաստանի զբոսաշրջության զարգացման նոր փուլ խթանեց, որի հիմնական թիրախը հայկական սփյուռքն էր, իսկ սփյուռքահայերի այցելությունը հայրենիք ավետվում էր որպես ուխտագնացություն: Համապատասխանաբար, կրոնական նոր լանդշաֆտի նախագիծը ոչ միայն դեպի կրոնականություն տանող գաղափարախոսական անցման ինչ-որ տեսակ էր, այլև խորհրդանշային կապիտալի դրամականացման արդյունք:

Ընդհանրապես, այս ժամանակահատվածում Հայաստանում կառուցվել կամ հիմնվել են բազմաթիվ նոր եկեղեցիներ: Արժանահիշատակներից է Սուրբ Աննա եկեղեցու և Ամենայն Հայոց Կաթողիկոսի երևանյան հայրապետական նստավայրի կառուցումը: Դրանց կառուցման համար 2002 թ. Կառավարությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին փոխանցեց Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի շենքը, որը կառուցվել էր 1938 թ.՝ խորհրդային իշխանությունների կողմից քանդված Սուրբ Աստվածածին բազիլիկ եկեղեցու տեղում: Շենքի քանդումը սկսվեց 2007 թ., իսկ 2015 թ. օծվեց Սուրբ Աննա եկեղեցին: Այսպիսով, եթե խորհրդային իշխանությունները քանդում էին եկեղեցիները և դրանց տեղում գիտության, կրթության և մշակույթի շենքեր կառուցում, ապա այս դեպքում տեսնում ենք եկեղեցու վերադարձը՝ խորհրդային ժառանգության ոչնչացման միջոցով: Սա վկայում է ոչ այնքան նոր ազգային գաղափարախոսության մեջ լեզվի դերի նվազման, որքան եկեղեցու ինստիտուցիոնալ ուժի և մասամբ առևտրային նախագծերում դրա ներգրավման մասին:

Միևնույն ժամանակ, սկսած 2002 թ.-ից, Եկեղեցու հետ համագործակցությամբ Հայաստանի հանրակրթական դպրոցներում ներդրվեց «Հայ եկեղեցու պատմություն» առարկան: 1990-ականների վերջից սկսած՝ Հայաստանում տեղի ունեցող կրթական բարեփոխումները հիմնականում իրականացվել են Համաշխարհային բանկի (ՀԲ) վարկային ծրագրերի շրջանակներում: ՀԲ-ի առաջին վարկը՝ «Կրթության ֆինանսավորման և կառավարման բարեփոխումներ» ծրագիրը (1998-2002 թթ.), նախատեսում էր, որ պատմության դասագրքերը հիմնված պիտի լինեն գոյություն ունեցող ուսումնական ծրագրերի վրա՝ միայն մաքրելով խորհրդային գաղափարախոսությունը և արտացոլելով հայկական մշակույթը: Սա միջանկյալ լուծում էր, որի նպատակն ուսումնական ծրագրերին և մեթոդաբանությանն առնչվող քաղաքականություններ մշակելու համար ժամանակ շահելն էր: Այս տարիներին առաջնահերթությունը դասագրքերի ստեղծումն ու մատակարարումն էր, և ընդհանուր առմամբ քիչ ուշադրություն էր դարձվում չափորոշիչների կամ ուսումնական ծրագրերի բարելավմանը (Bilmez et al, 2017):

Վերջապես, Քոչարյանի կառավարման տարիները նաև կապվում են բիզնես կողմնորոշում ունեցող կառուցապատման նպատակով Երևանի մշակութային ժառանգության ոչնչացման հետ, ինչը հանրային դժգոհության և բողոքի տեղիք տվեց՝ ի վերջո, հանգեցնելով ակտիվ, ինքնակազմակերպված, մշակութային ժառանգության և հիշողության մասին իրազեկ և դրա ոչնչացմամբ մտահոգ քաղաքացիական նախաձեռնությունների/խմբերի ձևավորմանը: Սակայն այս խմբերի աշխատանքը որոշ պտուղներ տվեց միայն մի քանի տարի անց:

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՎՐԱ ԱՎԵԼԻ ՄԵԾ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ (2008-2018 ԹԹ.)

Հայաստանի Հանրապետական կուսակցությունն (ՀՀԿ) այս շրջանի հիմնական իշխող ուժն էր: Թեև նախորդ 10 տարիներին այն արդեն իսկ գերիշխող դիրքերում էր խորհրդարանում և կառավարությունում, նախագահ Քոչարյանը հանրապետական չէր: 2008 թ. սկսած, Հայաստանն ըստ էության միակուսակցական պետություն դարձավ՝ այն իմաստով, որ մյուս բոլոր կուսակցությունների ընդհանուր հակառակ կարծիքը չէր կարող ունենալ ազդեցություն որոշումներ կայացնելու վրա: ՀՀԿ-ի քաղաքական ծրագիրը հստակորեն ազգայնական էր, և նախորդ ազգային միտումներն այս շրջանում էլ ավելի գերիշխող դարձան:

Ընդհանուր առմամբ, այս շրջանի ընդհանուր քաղաքականությունը, ինչպես նաև դրանից բխող ոլորտային քաղաքականությունները/գործողությունները, շարունակում էին ընթանալ այն հիմնական ուղղություններով, որոնց հիմքերը դրվել էին Քոչարյանի պաշտոնավարման տարիներին՝ պետություն-եկեղեցի ավելի սերտ համագործակցությամբ, ինչպես նաև ազգային միագիծ հիշողության կառուցման հետագա առաջխաղացման համար անհրաժեշտ իրավակարգավորումների շրջանակի ամրապնդմամբ: Այսպես, Հանրակրթության մասին օրենքի ընդունումից (2009 թ.) հետո, հանրակրթության պետական չափորոշիչները/ուսումնառության վերջնարդյունքները սահմանվեցին բոլոր առարկաների, այդ թվում՝ «Պատմություն» առարկայի համար: 2009 թ. ընդունված «Պատմության» չափորոշիչները (որոնք ուժի մեջ են եղել մինչև 2020 թ.) հիմնականում կենտրոնանում էին միևնույն ազգային հասկացությունների և ինքնության կառուցման վրա (Kharatyan, Toqmajyan, 2018):

Ուշագրավ է, որ այս նույն շրջանում քաղաքի կենտրոնում ընթացող եկեղեցաշինական նախաձեռնությունների պատճառով խորհրդային ժառանգության պահպանումը հանրային կարևորության խնդիր դարձավ: Ինչպես վերը նշվեց, Քոչարյանի քաղաքաշինական քաղաքականությունը նկատելի վնաս էր հասցրել Երևանի մշակութային ժառանգությանը, ինչն, իր հերթին, առաջ էր բերել ժառանգության պաշտպանությանն ուղղված մի շարք քաղաքացիական նախաձեռնություններ: 2010 թ. Կառավարությունը որոշեց «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճը հանել պետության պահպանության տակ գտնվող Հուշարձանների ցանկից և թույլատրել դրա տեղում եկեղեցու կառուցումը: Ինչպես Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը,

«Մոսկվա» կինոթատրոնը ևս կառուցվել էր եկեղեցու (Սուրբ Պողոս-Պետրոս) տեղում 1935-36 թթ.: Ամառային դահլիճն ավելացվել էր 1960-ականներին: Երբ հանրությունն իմացավ ամառային դահլիճի քանդման և դրա տեղում Պողոս-Պետրոսի նման եկեղեցու կառուցման որոշման մասին, մի խումբ երիտասարդ ճարտարապետներ և Երևանի ժառանգության պահպանմամբ մտահոգ ակտիվ քաղաքացիներ ինքնակազմակերպվեցին՝ նախաձեռնելով տարբեր ակցիաներ և որոշման կասեցման հանրագիր ներկայացնելով: Կարճ ժամանակ անց նախաձեռնության և դրա հանրագրի շուրջ ավելի քան 24,000 աջակից համախմբվեց, որոնց, ի վերջո, հաջողվեց փրկել ամառային դահլիճը: Սա հետաքրքիր դեպք է, քանի որ այն մի կողմից ազդարարեց հանրային տարածքի կրոնականացման և կրոնական ինքնության պարտադրման դեմ առաջին բողոքը, իսկ մյուս կողմից՝ խթանեց խորհրդային մոդեռնիստական շրջանի ճարտարապետության պաշտպանությունը: Խորհրդային ճարտարապետության վերագնահատումը դարձավ հիմնական հակակշիռը: Միևնույն ժամանակ սա վճռորոշ իրադարձություն էր, որն օգնեց բարձրաձայնել քաղաքային տարածքում «հիշողության վայրերի», ինչպես նաև քաղաքի նկատմամբ զգայուն վերաբերմունքով նոր քաղաքային ինքնություն ձևավորելու խնդիրները: Այս նոր ինքնությունն, ի վերջո, սկսեց աշխատել ոչ միայն հին շենքերի քանդումը կանխելու, այլ նաև այնպիսի «հերոսների» նոր արձանների կանգնեցման ուղղությամբ, որոնց հերոսության հանդեպ հանրությունը կասկածներ ուներ, այսինքն՝ հերոսության վերաբերյալ հանրային կոնսենսուս չկար: Նման օրինակներից է Անաստաս Միկոյանի ժառանգների՝ նրա արձանը կանգնեցնելու նախաձեռնությունը (Shagoyan, 2014): Այդ փորձը ոչ միայն կասեցվեց, այլև Միկոյանի ներգրավմամբ խորհրդային պատմության ավելի բարդ խնդիրները հանրային թեժ բանավեճի և քննադատության առարկա դարձան:

Այնուամենայնիվ, այս փուլի ամենակարևոր իրադարձությունը 2015 թ. Հայոց ցեղասպանության 100-ամյակի կազմակերպումն էր: Ըստ Հայոց Ցեղասպանության 100-ամյակի պետական կոմիտեի պաշտոնական հայտարարության՝ «Հիշում եմ և պահանջում» կարգախոսով և անմոռուկի խորհրդանիշով (որի հիմնական ուղերձը «հիշի՛ր»-ն էր) ոգեկոչման արարողությունն ամբողջությամբ կառուցված էր հիշողության շուրջ: Ողջ տարվա ընթացքում Հայաստանի ամբողջ տարածքում փողոցները, ճանապարհները և շենքերը հեղեղված էին հիշելու կոչ անող պաստառներով և ցուցատախտակներով: Պետական պաշտոնյաներից մինչև դպրոցի ուսուցիչներ՝ բոլորը կրում էին անմոռուկներով կրծքանշաններ և քորոցներ: Միևնույն ժամանակ երկրի տարբեր հատվածներում գտնվող և նախկինում ցեղասպանությանը նվիրված հուշարձան և/կամ հուշահամալիր չունեցող համայնքները տեղադրեցին նման հուշարձաններ: Որպես քաղաքապետարանների և գյուղապետարանների, կամ կառավարության հետ առնչություն չունեցող անհատների տեղական նախաձեռնություններ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին խաչքարեր կանգնեցվեցին: Սա այն դեպքն էր, երբ հիշողության՝ վերևից եկող քաղաքականությունը համընկնում էր ներքևից եկող ժողովրդական, տեղական նախաձեռնությունների հետ: Այս հուշարձաններից մի քանիսը Նախիջևանում (Ձուղայի գերեզմանատանը) ադրբեջանական իշխանությունների ոչնչացրած խաչքարերի կրկնօրինակներն էին (հազարավոր խաչքար-հուշարձանների վերջին խոշոր ոչնչացումը տեղի է ունեցել 2005-2006 թթ.): Սովորաբար հայկական խաչքարերը չեն

կրկնօրինակվում, յուրաքանչյուր խաչքար եզակի է, և այս կանոնին հետևելը պարտադիր է եղել 50000 նման հուշարձանների դեպքում (ՅՈՒՆԵՍԿՕ, 2010 թ.): Միակ բացառությունն արվել է Ձուղայի խաչքարերի կրկնօրինակների համար, որոնք այդպիսով դարձել են կրկնակի հուշարձան՝ նվիրված ոչ միայն ցեղասպանության զոհերի, այլև ոչնչացված հուշարձանի հիշատակին: Այսպիսով, հանրային խոսույթում ոչ միայն Սումգայիթի, Կիրովաբադի, Բաքվի և այլ քաղաքների ջարդերի թեման դարձավ ցեղասպանական պատումի մաս, այլև Ադրբեջանում հայկական հուշարձանների ոչնչացմանը հատկացվեց նույն պատմական «լոկուսը»՝ վայրը, որը հատկացվում էր Թուրքիայում հայկական մշակութային ժառանգության ոչնչացմանը:

Տարրական դպրոցի երկրորդ դասարանից սկսած՝ դպրոցականների խմբեր էին գալիս Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Ցեղասպանության զոհերի հիշատակին հիշատակի օրվանից՝ ապրիլի 24-ից շաբաթներ առաջ: Դպրոցական պատկերագրության մեջ ներառվեցին նոր տարրեր՝ պաստառներ, ինստալյացիաներ և ներքին դեկորացիաներ, որոնք ստեղծվում էին ամեն օր՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ: Դրանցում ներառվում էր պաշտոնական անմոռուկ ծաղիկը և կարգախոսը՝ «Հիշում եմ և պահանջում» (Mkrtchyan, 2015): Դպրոցականներին հանձնարարում էին նկարել և/կամ թղթից անմոռուկներ պատրաստել, և այդ նկարներն ու թղթից պատրաստված ծաղիկները տարվում էին Ծիծեռնակաբերդ:

ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ. ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ «ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄՆԵՐ» (2018 Թ?-ՄԻՆՉ ՕՐՍ)

Հիշողության քաղաքականության տեսանկյունից վերջին տարիներին (2018-2021 թթ.) երկու հստակ փուլեր են առանձնանում՝ մինչև 2020 թ. 44-օրյա պատերազմն ու դրանից հետո:

• Նախքան 2020 թ. 44-օրյա պատերազմը

2018 թ. Թավշյա հեղափոխությունը սկզբում մի շարք փոփոխություններ բերեց հիշողության քաղաքականություն: Նախ, պաշտոնական տոնացույցում ավելացվեց նոր տոն՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու օրը»՝ հեղափոխությունը և քաղաքացիական պայքարի հաջողությունը տոնելու համար: Որպեսզի այս օրը հավելյալ ոչ աշխատանքային օր չդառնա, որոշվեց այն տոնել ապրիլի վերջին կիրակի օրը՝ այս կերպ այն կրոնական տոների նման շարժական դարձնելով: Իսկ որոշ տարիների այն անխուսափելիորեն համընկնելու է ապրիլի 24-ի հետ: Այս որոշումն այնքան էլ արդյունավետ չէր՝ տոնացույցում օրը ֆիքսելու և օրվա հայեցակարգը հանրայնացնելու տեսանկյունից: Տոնը նշելու ձևի հետ կապված նոր մոտեցումը խոշոր տոնակատարությունները կենտրոնից, այսինքն՝ Երևանից կամ Երևանի կենտրոնական հրապարակից, դեպի համայնքներ ու այլ կենտրոններ տեղափոխելու միտում ուներ՝ այսպիսով ապակենտրոնացնելով տոնակատարությունները և տարբեր խմբերին «հիշողության նոր վայրեր» ստեղծելու հնարավորություն տալով: Ապակենտրոնացման այս միտումը հետագայում էլ ավելի զարգացավ՝ հատկապես Covid-19-ի արգելափակման համատեքստում, երբ համավարակով պայմանավորված սահմանափակումների պատճառով հանրային միջոցառումների անցկացումն անհնարին դարձավ: Համավարակային արգելափակման շրջանում (հայտարարվել է 2020 թ. մարտի 14-ին) հանրայնորեն նշված հիշատակի առաջին օրն ապրիլի 24-ն էր՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը: Իշխանություններն առաջարկեցին ոգեկոչման միանգամայն նոր եղանակ՝ դեպի հուշահամալիր զանգվածային երթին այլընտրանք: Քաղաքացիների ներկայությունը պատվիրակվել էր Հայաստանի բոլոր 10 մարզերի ներկայացուցիչներին, իսկ Հայաստանից դուրս

գտնվող աշխարհասփյուռ հայությանը ներկայացնում էր Սփյուռքի գործերի հանձնակատարը: Մարդկանց վիրտուալ ներկայությունն ապահովվում էր անհատների անուններով տեքստային հաղորդագրությունները հատուկ բջջային համարի ուղարկելու միջոցով: Այդ անունները պրոյեկտվում էին հուշահամալիրի պատերին ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերվա ընթացքում: Մեկ այլ տարբերակ իրականացրել է HyeID վիրտուալ հարթակը, որտեղ Հայոց ցեղասպանության փոխներգործուն առցանց քարտեզի վրա նշում էիք ձեր գտնվելու վայրը, և այնուհետև «անմոռուկը» նշում էր ձեր «ներկայությունը» «Արդարության քայլարշավի» ոգեկոչման քարտեզի վրա: 2020 թ.-ին 198 երկրից 1354 շրջանից և 8784 քաղաքից ընդհանուր թվով 341423 մարդ է մասնակցել «Երթ հանուն արդարության» վիրտուալ նախաձեռնությանը:[15]

Այս շրջանում նախատեսվում էր Երևանի հիշողության լանդշաֆտում ևս մի ուղենիշային հուշարձան ավելացնել. որոշվել էր 2008 թ. մարտի 1-ի դեպքերի զոհերի հիշատակին հուշարձան կանգնեցնել: Այս նախաձեռնությունները ազգային ինքնությունից քաղաքացիական ինքնության անցման զգուշավոր փորձի նշաններ էին: Միևնույն ժամանակ վերանայվում էին հանրակրթության չափորոշիչները և ուսումնական ծրագիրը, և ըստ բարեփոխումների օրակարգի՝ «Հայ եկեղեցու պատմություն» առարկան այլևս որպես առանձին առարկա չէր դասավանդվելու: Վերջապես, «Պատմություն» առարկայի չափորոշիչների նախագծի շուրջ ընթացող բանավեճերում ավանդական պատմաբանները բարեփոխումն իրականացնողներին մեղադրում էին պատմության ապազգայնացման մեջ:

Ուշագրավ է, որ նոր Կառավարության քաղաքականությունը մշակութային ժառանգության ուղղությամբ առանձնապես չփոխվեց: Այն շարունակեց նախորդ կառավարության ծրագրած, բիզնեսի շահերը սպասարկող քաղաքաշինական աշխատանքները, և ակտիվ քաղաքացիական խմբերը հիմա էլ են Երևանի շենքերն ու վերնակույայր թաղամասերը պաշտպանում քանդումից և ոչնչացումից:[16] 2019 թ. վերջին երևան եկավ նոր քաղաքացիական նախաձեռնություն՝ Երևանի ժառանգության պաշտպանության կոմիտեն:[17] Նախաձեռնությունը զբաղվում է քաղաքաշինության և Երևանի ժառանգության հարցերով: Նմանատիպ մի խումբ՝ Գյումրիի ժառանգության պաշտպանության կոմիտե քույր-նախաձեռնությունը, ձևավորվեց 2020 թ.-ին Գյումրիում:[18] Հիշողության խոսույթը զարգանում էր՝ հիմնականում մշակութային ժառանգության և դրա ոչնչացման պատճառով հիշողության կորստով մտահոգ մարդկանց մասնակցությամբ: Այս խմբերից ոմանք սկսեցին հիշողության զբոսանքներ կազմակերպել Երևանում և այլ քաղաքներում: Այս զբոսանքների

15. Քարտեզն աշխատում էր նաև համավարակի ընթացքում: (https://www.hyeid.org/en/april-24-march-for-justice/)

16. Առավել վերջերս տեղ գտած օրինակը քաղաքի սրտում՝ Հանրապետության հրապարակից ոտքով ընդամենը մի քանի րոպեի հեռավորության վրա գտնվող Ֆիրդուսի թաղամասն է:

17. Երևանի ժառանգության պաշտպանության կոմիտեի ֆեյսբուքյան էջը// https://www.facebook.com/OtherYerevan

18. Գյումրիի պաշտպանության հանձնաժողովի ֆեյսբուքյան էջը// https://www.facebook.com/%D4%B3-%D5%B5%D5%B8%D6%82%D5%B4%D6%80%D5%AB%D5%AB-%D5%AA%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B6%D5%A3%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A5-101111211681541/about/?ref=page_internal

ուղիները ներառում են նաև խորհրդային, մասնավորապես՝ մոդեռնիստական ճարտարապետության ժառանգությունը՝ այսպիսով վերաարժևորելով խորհրդային անցյալը: Նման տեղական նախաձեռնությունները նշանավորեցին ինքնության և քաղաքային տարածքի շուրջ ավելի ընդլայնվող բանավեճը:

- 2020 թ. 44-օրյա պատերազմին հաջորդող շրջանը

Թեև 2018 թ. հեղափոխությունից հետո հիշողության կառուցման ավելի բազմատեսանկյուն մոտեցման անցնելու որոշ նշաններ կային, և արդեն իսկ որոշ քայլեր էին արվել ավելի բաց և ներառական հիշողության քաղաքականության ուղղությամբ, պատերազմից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց՝ նշանավորելով վերադարձը ծանոթ ազգային պատումների ապահով հանգրվանին: Այս փոփոխության նշանները տեսանելի են տարբեր ոլորտներում, սակայն կուզեինք առանձնացնել երեք կարևոր դրսևորում. ա) տեղական և ազգային նախաձեռնություններ, որոնք ուղղված են Ղարաբաղյան պատերազմնե-րի և դրանց հերոսների հուշարձանացմանը, բ) «վրեժի» հիշողությանը սատարող նախաձեռնություններ, գ) Ղարաբաղյան հակամարտությունը Հայոց ցեղասպանության և չլուծված հայ-թուրքական հարաբերությունների խնդրին կապող վերստին հայտնվող պատումներ և խոսույթներ: Ի լրումն, Հայաստանի ինքնիշխանության կորստի պատմական վախը և դրա հետ կապված հիշողությունը նույնպես հայտնվեց հանրային խոսույթում, ինչպես նաև իր դրսևորումը գտավ հանրային տարածքում:

ա) Ղարաբաղյան պատերազմ(ներ)ի և դրանց հերոսների հիշողությանն ուղղված տեղական և ազգային նախաձեռնություններ

Պատերազմից հետո Փաշինյանի կառավարության նախաձեռնած ամենաառաջին հանրային միջոցառումներից մեկը 2020 թ. դեկտեմբերի 19-ին՝ 44-օրյա պատերազմին հետևած 40-րդ օրը Եռաբլուր այցն էր: Այդ օրը պատերազմի զոհերի հիշատակին եռօրյա սուգ հայտարարվեց Հայաստանում և Արցախում:[19] Անգամ դրանից առաջ Եռաբլուրը պատերազմի հիմնական խորհրդանիշն էր: Հայաստանյան մեդիան ողողված էր Եռաբլուրում ծածանվող հայոց եռագույնի տակ հանգչող զոհվածների հազարավոր նոր/թարմ գերեզմանների և սգացող ծնողների ու ընտանիքի անդամների լուսանկարներով:

Պատերազմից կարճ ժամանակ անց, մի շարք համայնքներ հանդես եկան Ղարաբաղյան պատերազմի մասնակից իրենց համայնակիցների հիշատակի հավերժացմանն ուղղված նախաձեռնություններով: Այսպիսի նախաձեռնություններից էին փողոցների անվանակոչումը/վերանվանումը, հուշարձանների/հուշահամալիրների (հիմնականում խաչքարեր) տեղադրումը, դպրոցներում «հիշատակի անկյունների» ստեղծումը: Հիշատակի տեղական տարածված եղանակներից էր շենքերի պատերին զոհված կամ անհետ կորած զինվորի դիմապատկերը նկարելը՝ սթրիթարթի նման: Այս ձևը, կարծես, եկել էր փոխարինելու ցայտաղբյուրները, որոնք հաճախ կառուցվում էին ի հիշատակ առաջին արցախյան պատերազմի զոհվածներին՝ որպես հուշարձանացման տեղային (նաև՝ ընտանեկան, ընկերային) նախաձեռնություններ:[20] Նման

19. Ի վերջո, Եռաբլուրը դարձավ բախումների կենտրոն այնտեղ հավաքված ընդդիմության և Հանրապետության հրապարակից դեպի Եռաբլուր քայլերթով անցած Կառավարության միջև:

20. Այս միտքը բանավոր քննարկումներում զարգացրել է հայաստանյան սթրիթարթ ուսումնասիրող՝ մշակութաբան Ամալյա Դիլանյանը:

նախաձեռնությունների ամենավառ օրինակներից է Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի 13 փողոցներն «Արցախյան պատերազմում հերոսացած» ակունքցիների անուններով կոչելը:[21] Այս փողոցների անվանակոչման պաշտոնական արարողությունը տեղի է ունեցել 2021 թ. ապիլի 8-ին՝ տեղական և մարզային իշխանությունների, Եկեղեցու և զինված ուժերի ներկայացուցիչների և հերոսների ընտանիքների անդամների մասնակցությամբ:

Մինչդեռ նման տեղական նախաձեռնությունների նպատակը հիմնականում տեղացիներին հիշելը /նրանց հիշատակը վառ պահելն է, և այսպիսի պրակտիկաներ վերջին պատերազմից առաջ էլ կային, ազգային մակարդակում կան նախաձեռնություններ, որոնք միշտ չէ, որ առնչվում են կոնկրետ/մասնավոր անունների և անձանց, այլ ուղղված են ընդհանուր առմամբ արցախյան հերոսամարտի մասին հիշողության ձևավորմանը:[22] Այսպիսի տարբերվող/արժանահիշատակ տեղական նախաձեռնություններից մեկը քաղաքացիական հասարակության մի շարք ականավոր ներկայացուցիչների/իրավապաշտպան ակտիվիստների ստորագրությամբ «համայնքապետերին» ուղղված դիմումն է, որտեղ նրանք առաջարկում են.

1. Բոլոր մարզկենտրոններում մեկական (ոչ երկրորդական) փողոց վերանվանել «Արցախյան հերոսների» անունով,
2. Երևանում Ծիծեռնակաբերդի խճուղին վերանվանել Արցախյան հերոսների փողոցի (կամ խճուղու), ինչպես նաև դիտարկել այդ և Մոնթե Մելքոնյանի փողոցների միջև ընկնող (այժմ կառուցվող) թաղամասն Արցախյան հերոսների թաղամաս անվանելու հարցը, Երևանի Հյուսիսային պողոտայում կամ որևէ այլ կենտրոնական տեղում տեղադրել Արցախյան հերոսների հավաքական սխրանքը պատկերող հուշակոթող:
3. Երևանի Հյուսիսային պողոտայում կամ որևէ այլ կենտրոնական տեղում տեղադրել Արցախյան հերոսների հավաքական սխրանքը պատկերող հուշակոթող:

Դիմումը հրապարակվել է 2021 թ. սեպտեմբերի 18-ին՝ «Հայաստանի անկախության 30-ամյակի, Արցախի անկախության 30-ամյակի և Արցախյան պատերազմի դե ֆակտո 30-ամյակի կապակցությամբ»: Այն առաջարկում է ««Արցախյան հերոսներ» պայմանական անունը կրող այդ անձանց առանձին և կոլեկտիվ սխրանքները հավերժացնել»՝ տրամադրելով հետևյալ բացատրությունը/հիմնավորումը. «Այս երեսուն տարիների ընթացքում Արցախի հայության իրավունքները թշնամուց պաշտպանելը ավելի քան 10 հազար մարդու կյանք է արժեցել: Տասնյակ հազարավորներ ունեցել են առողջության ժամանակավոր, տևական կամ ցմահ կորուստ: Անթիվ է այն մարդկանց քանակը, որոնք ունեցել են նյութական, բարոյական, հոգեբանական կորուստներ՝ հանուն արցախահայության իրավունքների պաշտպանության»:[23] Այս նախաձեռնությունն

21. Միջոցառման մասին լրացուցիչ տեղեկությունները տե՛ս՝ http://gegharkunik.mtad.am/news/item/2021/04/08/2/
22. 1991-2021 թթ. արցախյան պայքարը և պատերազմները հայերենում անվանվում են «Արցախյան հերոսամարտ» բառակապակցությամբ:
23. Դիմումի ամբողջական տեքստը տե՛ս՝ https://www.aravot.am/2021/09/18/1216540/?fbclid=IwAR3YohFk1DuP44Bv6c_BOory5D2ZU2Z9yhLGwcNmZBA6ENyxIjGgdO45S4I:

ուշագրավ է, նախ և առաջ այն պատճառով, որ գրվել է մարդու իրավունքների տեսանկյունից: Բացի այդ, այն ստորագրողներից ոմանք շարունակաբար պիտակավորվել և հարձակումների են ենթարկվել խաղաղարարության նախաձեռնություններին իրենց մասնակցության, ինչպես նաև իրենց «լիբերալ», «թուրքամետ», «հակահայրենասիրական» [այս պիտակներն օգտագործել են նրանց վրա հարձակվողները] տեսակետների համար: Այս դիմումում հետաքրքրական մյուս փաստն այն է, որ այն ստորագրողներն առաջարկում են Ծիծեռնակաբերդի խճուղին անվանել Արցախյան հերոսների խճուղի: Ծիծեռնակաբերդի խճուղին Ծիծեռնակաբերդ՝ Երևանում Հայոց ցեղասպանության հուշահամալիր տանող հիմնական խճուղին է: Սա հուշում է Ցեղասպանության հիշողության էական գերիշխանությամբ առանձնացող գլխավոր պատումն ընդլայնելու և Ցեղասպանության հիշողության հիման վրա մարդկանց համախմբած, ադրբեջանցիներին թուրքերի հետ նույնականացրած Ղարաբաղյան շարժման առաջին փուլին վերադառնալու գիտակցված կամ ենթագիտակցական մղումի մասին, ընդ որում, այսպիսի նույնականացումը նոր վերահաստատում գտավ Էրդողան – Ալիևի՝ «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգի միջոցով:

Նախաձեռնությունների երրորդ տեսակը պատերազմի զոհերի հիշատակին խաչերի կանգնեցումն է: Մեծ, մետաղյա խաչերի կանգնեցումը տարածում գտավ 2016 թ. ապրիլյան պատերազմից հետո, հատկապես Ղարաբաղում և Հայաստանի սահմանամերձ տարածքներում, և այսպիսի նախաձեռնությունների հեղինակները հավատում են, որ «խաչերն իրենց պաշտպանում են թշնամուց և չար ուժերից»:[24] Այնուամենայնիվ, Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղում 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին 44 մետր բարձրությամբ մետաղյա խաչի կառուցումը, սոցիալական ցանցերում լայնածավալ քննադատության առիթ հանդիսացավ,[25] այդ թվում՝ այնպիսի մեկնաբանությամբ, թե «Հայերը խաչ են քաշել Հայաստանի վրա» (այն իմաստով, որ ինչ-որ բանի վրա խաչ քաշել նշանակում է ջնջել, այս դեպքում, վերջ դնել Հայաստանին):[26]

«Հայաստանի վերջը դնելու» այս պատումը կապված է պարտությունից հետո ինքնիշխանության նվազման ահագնացող զգացողության հետ, որի խորհրդանշական դրսևորումը Հայաստանում և Արցախում մարդկանց պատուհաններից և պատշգամբներից, մեքենաներին և այլ տեղերում փակցված ազգային դրոշների քանակի աճն է: Դրոշները նախ հայտնվեցին պատերազմի ընթացքում և ապա մնացին ու շարունակեցին տարածվել, երբ պատերազմն արդեն ավարտվել էր:

2021 թ. սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի անկախության 30-ամյակին, վարչապետ Փաշինյանը հայտարարեց Կյանքի զբոսայգու հիմնման մասին, որտեղ ծառեր պիտի տնկվեն Ղարաբաղյան պատերազմներում զոհվածների հիշատակին. «Արդեն երկար ժամանակ քննարկում ենք, թե ինչպիսի՞ նախագծով պիտի հավերժացնենք արցախյան բոլոր պատերազմների նահատակների հիշատակը, որ խորհրդանշենք նրանց ներկայությունը, նրանց ապրելը մեր

24. Լուսինե Խառատյան, Ազգագրական դաշտային նյութ, Լեռնային Ղարաբաղ և Հայաստան, 2017-2018 թ.

25. https://medialur.com/38427/

26. Խաչի մասին քննարկումները և/կամ քննադատությունը տե՛ս՝https://mamul.am/am/news/224754; https://www.aravot.am/2021/11/11/1228364/:

կողքին: Եւ որոշում ենք կայացրել Երեւանի բուսաբանական այգում հիմնադրել Կյանքի պուրակը, Կենաց պուրակը, որտեղ արցախյան բոլոր պատերազմների բոլոր զոհերի կենդանությունն ու ներկայությունը խորհրդանշող ծառեր կտնկվեն, իսկ պուրակի կուլմինացիան կլինի Կենաց ծառը, մեր բոլոր նահատակներին եւ հայրենիքին տված նրանց կյանքը խորհրդանշող: Դա չի լինելու հուշակոթող, դա լինելու է կենաց պուրակ, որտեղ վազվզելու, աղմկելու, խաղալու են երեխաները, երիտասարդները ժամանց են ունենալու, մեծահասակները ճեմելու են ու զրուցելու, եւ այդ պուրակը լինելու է նրա մասին, որ ահա այդ բոլոր մարդկանց, այս բոլոր մարդկանց՝ Հայաստանի ու Արցախի ապրելու համար են զոհվել նրանք: Եւ Հայաստանի ապրելը, Արցախի ապրելը, խաղաղ ու զարգացող հայոց պետականությունը պիտի դառնա այն հաղթանակը, որ նրանք կերտեցին...»:[27] Կարծում ենք, որ պուրակի գաղափարն առաջացել է Բաքվում բացված «Ռազմավարի պուրակին» ի պատասխան: Բազմաթիվ միջազգային կազմակերպություններ «Ռազմավարի պուրակը» որակել էին որպես «այլատյաց», և այսպիսով «Կենաց պուրակի» մասին այս հայտարարությունը նաև նպատակ ուներ ընդգծելու Հայաստանի խաղաղարար հիշողության քաղաքականությունը՝ ի տարբերություն Ադրբեջանի ռազմատենչ հիշողության քաղաքականության: Հայաստանի և Ադրբեջանի քաղաքական գործիչների հայելային հռետորաբանությունը, ներառյալ հիշողության քաղաքականությանն առնչվող հռետորաբանությունը որպես ազգային գաղափարախոսությունների բաղադրիչ, ուրվագծվում է Ղարաբաղյան հակամարտության ողջ ընթացքում: Հակառակորդ կողմի հուշարձանների դեմ պատերազմին, որն այս պահին հատկապես կատաղի է Արցախի՝ ադրբեջանական վերահսկողությանն անցած տարածքներում և լայնորեն քննարկվում է Հայաստանում, այժմ ավելացավ նաև «պուրակների մրցակցությունը»:

բ) «Վրեժի» հիշողությանը սատարող նախաձեռնություններ

2021 թ. սեպտեմբերի 14-ին Երևանի ավագանին հաստատեց «Ազգային արժանապատվության ասպետներին» նվիրված «Նեմեսիս»[28] հուշակոթողի տեղադրման համար հայտը, որը ներկայացվել էր Հայոց ցեղասպանության վրիժառուների ժառանգների[29] կողմից՝ «հավերժացնելու համար Հայոց Ցեղասպանության կազմակերպիչների նկատմամբ արդարադատություն իրականացրած հերոս հայորդիների հիշատակը»: Այս որոշումը հատկապես ուշագրավ է դարձնում այն հանգամանքը, որ դիմումն ի սկզբանե ներկայացվել էր 2019 թ.-ին՝ նշանավորելու Ստամբուլում երիտթուրքերի նկատմամբ իրականացված ռազմական տրիբունալի 100-ամյակը, որը մեղավոր էր ճանաչել Հայոց Ցեղասպանության ոճրագործներին: Չնայած տրիբունալի վճռին՝ պատերազմական հանցագործների մեծ մասը կարողացավ փախչել, և հետևաբար նախաձեռնվեց «Նեմեսիս» գործողությունը՝ նրանց մահապատժի

27. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված գլխավոր միջոցառումը Հանրապետության հրապարակում // Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական Youtube ալիք, https://www.youtube.com/watch?v=IbVaV9Mekkc

28. «Նեմեսիսը» Հայ Հեղափոխական Դաշնակցության գաղտնի ստորաբաժանման կողմից 1920-1922 թթ. իրականացված գործողություն էր, որի նպատակը Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության և Բաքվում 1918 թ. հայերի ջարդերի համար պատասխանատու անհատների, ինչպես նաև հանցագործների հետ համագործակցած հայերի սպանությունն էր:

29. https://www.yerevan.am/am/news/erewanowm-kteghadrvi-nemesisi-aspetnerin-nvirvats-aghbyowr-howsha-kot-ogh-kayats-el-e-erewani-avagano/

որոշումն ի կատար ածելու համար:[30] Սակայն, Երևանի ավագանին ի սկզբանե հակված չէր հաստատել այս դիմումը, քանի որ Երևանի քաղաքային տարածքում վրիժառուների հիշատակին նվիրված արդեն մի քանի հուշարձան/հուշակոթող[31] կար:[32] Հուշակոթողի տեղադրման որոշումը կայացվեց պատերազմից հետո, և սա հիշողության քաղաքականության ընդհանուր փոփոխության ևս մի նշան է: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Ավագանու որոշումը ՁԼՄ-ներում որոշ քննադատության արժանացավ: Օրինակ՝ հայտնի սյունակագիր Միեր Արշակյանն Ավագանու որոշման մասին իր լայնորեն շրջանառված հոդվածում գրում է. «Մենք ապրելու խորհուրդ չունենք պատերազմից հետո եւ ահա առաջարկում ենք փառաբանել վրիժառությունը, որն իր գործն արել է պատմության ուրույն ժամանակահատվածում»:[33]

գ) Ղարաբաղյան հակամարտությունը Ցեղասպանությանը և չլուծված հայ-թուրքական հարաբերություններին կապող պատումների և խոսույթների վերարտադրում

Ինչպես տեսնում ենք վերոնշյալ օրինակներից, երկու դեպքում էլ, այսինքն՝ Ղարաբաղյան պատերազմի հուշարձանացման և Նեմեսիսի հուշակոթողի տեղադրման որոշման, հղում է կատարվում Ցեղասպանությանը և այսպիսով նաև հայկական մետա-պատումին: Առաջին՝ Ծիծեռնակաբերդի խճուղու վերանվանման դեպքում, կրկնագրման փորձ է նկատվում՝ պատումը նորից գրելու, Ցեղասպանության տրավմատիկ հիշողությունը ազգային ինքնության կառուցման նորագույն հիմնասյունով փոխարինելու, որն ավելի հերոսական է և ներառում է պայքար ու դիմադրություն, և ոչ միայն զոհաբերություն (հմմտ. Մարության 2015; 2021): Երկրորդ դեպքի ուղերձը, այսինքն՝ Նեմեսիսի հուշակոթողի բացումը, նորից վերաբերում է զոհի կերպարի և տրավմայի պատումը պայքարի և վրիժառության պատումով փոխելուն: Միևնույն ժամանակ, Թուրքիայի ներգրավվածությունը Ղարաբաղյան հակամարտության հարցում լուրջ թեմա է հանրային խոսույթում: Այն գերիշխում է հանրային ասպարեզում այնպիսի արտահայտություններով, ինչպիսիք են՝ «թուրք-ադրբեջանական հարձակում», «եթե չլիներ Թուրքիայի աջակցությունը, Ադրբեջանը երբեք չէր հաղթի», «արցախահայերի կյանքը ևս մի ցեղասպանության վտանգի տակ է» և այլն:

Ընդհանուր առմամբ, թեև հիշատակի և հիշողության մշակույթում վերջին շրջանի զարգացումները վկայում են պատումներում առկա որոշ փոփոխությունների և Ղարաբաղյան/Արցախյան պատերազմի՝ ինքնության կառուցման այլ տարրերի առկայության մասին, դեռևս վաղ է՝ հիմնական միտումներն առանձնացնելու համար:

30. «Նեմեսիս» գործողության շրջանակներում ամենահայտնի սպանությունը 1918 թ. Գերմանիայի Բեռլին քաղաքում Թալեաթ փաշայի՝ Սողոմոն Թեհլերյանի կողմից իրագործված սպանությունն էր:

31. Ոչ միայն Նեմեսիս գործողությանը, այլ նաև ԱՍԱԼԱ-ին նվիրված:

32. Տեղեկությունները հիմնված են Լուսինե Խառատյանի՝ Երևանի ավագանու որոշ անդամների հետ 2019 թ. ունեցած քննարկումների վրա:

33. https://www.aliqmedia.am/2021/09/15/29201/

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով՝ նշենք, որ հիշողության քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում 1991-2021 թթ. ընդհանուր առմամբ ձևավորվել է ազգային պետության կառուցման շուրջ և պտտվել մեծ ազգային պատումի շուրջ՝ շատ քիչ տեղ թողնելով այլընտրանքային խոսույթի համար: Ազգային պետության կառուցման նպատակներով, թե՛ հիշողության, թե՛ մոռացման քաղաքականություններ և պրակտիկաներ են կիրառվել՝ պաշտոնական տոնացույցի, հիշողության լանդշաֆտի և կրթական ծրագրերի փոփոխության միջոցով: Ցեղասպանության հիշողությունը եղել է Գլխավոր պատումը, որն ազդել է հիշողության ձևավորման այլ պրակտիկաների մեծ մասի վրա: Մեկ այլ անկյունաքար է Ղարաբաղյան/Արցախյան պատերազմը, որը սերտորեն միահյուսված է Ցեղասպանության պատումին: Սա էլ ավելի ամրապնդվեց 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո: Այնուամենայնիվ, այլընտրանքային պատումների ձևավորմանը և պաշտոնական քաղաքականության վրա ազդելուն ուղղված մի շարք տեղական նախաձեռնություններ և քաղաքացիական հասարակության նախագծեր են հայտնվել 2008 թ.- ից սկսած՝ հանգեցնելով հիշողության և հիշողության քաղաքականության մասին քննադատական խոսույթի տարածքների ստեղծմանը:

ՀՂՈՒՄՆԵՐ

Abrahamian, Levon, 2006. Armenian Identity in a Changing World. Costa Mesa, CA: Mazda Publishers.

Abrahamian, Levon, 2012. Yerevan: Memory and Forgetting in the Organization of Post-Soviet Urban Space // Russian Cultural Anthropology after the Collapse of Communism / Ed. by Baiburin, Albert, Kelly, Catriona and Vakhtin, Nikolai. London and New York: Routledge, pp. 254-275 (chapter 11).

Alexander, Jeffrey C., 2004. Toward a Theory of Cultural Trauma / Cultural Trauma and Collective Identity, University of California Press, pp. 1-30.

Alexander, Jeffrey C., 2012. Trauma. A Social Theory, Polity Press.

Ankersmit, Franklin R. History and Tropology: The Rise and Fall of Metaphor, Berkeley, LA, London: University of California Press.

Assmann, Aleida, 2006. Der Lange Schatten Der Vergangenheit: Erinnerungskultur und Geschichtspolitik, München, Verlag C.H.Beck.

Assmann, Alejda, 2013. Ist die Zeit aus den Fugen? Aufstieg und Fall des Zeitregimes der Moderne, München 2013.

Assmann, Aleida, 2019. Oblivion History — Obsession with Historyисторией, Moscow: “Novoe literaturnoe obozrenie” (in Russian).

Bilmez, Bülent (editor) et al., 2017. History Education in Schools in Turkey and Armenia A Critique and Alternatives, Istanbul & Yerevan. https://epfarmenia.am/sites/default/files/Document/Tarih-Vakfi-and-Imagine-Final-Papers-June-20.pdf

Connerton, Paul, 1989. How Societies remember, Cambridge University Press.

Connerton, Paul, 2009. How Modernity Forgets, Cambridge University Press.

Dabaghyan, Artak, 2011. Place Renaming Practices in Post-War Karabakh / Artsakh, Acta Acta Ethnographica Hungarica, 56 (2), pp. 403–427.

Eyerman, Ron, 2004. Cultural Trauma. Slavery and the Formation of African American Identity / Cultural Trauma and Collective Identity, University of California Press, pp. 60-111.

Matosyan, Tigran, 2013. “‘Inventing Traditions’: The Theme of Sovietisation in History Textbooks of Soviet and Post-Soviet Armenia.” Edited by Oksana Karpenko. Myths and Conflicts in the South Caucasus. Volume 1. Instrumentalization of Historical Narratives (International Alert) 54-71. https://www.international-alert.org/sites/default/files/publications/Caucasus_2013_Myths_Vol1_EN.pdf

Mkrtchyan, Satenik, 2015. The Memory of the Armenian Genocide as Taught in Armenian Schools: Textbooks, School Rituals and Iconography, https://ge.boell.org/en/2015/04/23/memory-armenian-genocide-taught-armenian-schools-textbooks-school-rituals-and-iconography

Shagoyan, Gayane, 2016. Between Memory and Memorial: Anastas Mikoyan and "Social Lustration" in Armenia // Caucasus Analytical Digest, No 80, 16 February. https://www.laender-analysen.de/cad/pdf/CaucasusAnalyticalDigest80.pdf

Zolyan, Mikayel; Zakaryan, Tigran, 2008. "Armenia: The Images of 'Self' and 'Other' in Textbooks on History of Armenia." Edited by Luboš Veselý. Contemporary History Textbooks in the South Caucasus (Association for International Affairs (AMO)) 11-33. https://www.amo.cz/wp-content/uploads/2015/11/contemporary-history-textbooks-in-the-sc.pdf

UNESCO 2010. Armenian cross-stones art. Symbolism and craftsmanship of Khachkars // UNESCO, Culture: Intangible Heritage, Lists, https://ich.unesco.org/en/RL/armenian-cross-stones-art-symbolism-and-craftsmanship-of-khachkars-00434

Խառատյան Լուսինե, Թոքմաջյան Վահրամ, 2018, «Հայոց: պատմություն և հայ գրականություն առարկաների դասավանդումն ավագ դպրոցում»

ության Հարություն, Հայ ինքնության պատկերագրությունը: Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009.

Մարության, Հարություն, 2015. Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի և ինքնապաշտպանական կռիվների հերոսների հիշատակման օր // Մարդ և հասարակություն, Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, N 1(58), էջ 8-12:

Մարության, Հարություն, 2021. «Հիշում եմ և պահանջում» կարգախոսը և հայոց ցեղապսանության հիշողության փոխանցման մարտահրավերները 21-րդ դարում // Congres National Des Armeniens Occidentaux https://cnarmeniens.org/MarutyanSept2021

Абрамян Левон, «Борьба с памятниками и памятью в постсоветском пространстве (на примере Армении)», Acta Slavica Iaponica, no. 20 (2003): 25 – 49.

Калинин, Илья, 2021. Историческая политика // Теория и практика публичной истории / Под ред. А. Завадского, В. Дубиной, М.: Новое издательство, 2021.

Харатян, Л., 2008, Освоение «чужого» пространства: армяне-беженцы в «азербайджанских» селах Армении// Разгадать Южный Кавказ: общества и среда обитания. Сборник статей/ Научный редактор Герасимова, Е., Тбилиси, ФГБ, 2008, стр. 129-146.

Шагоян Гаяне, Армянский геноцид как метанарратив травматической памяти, 2016, http://gefter.ru/archive/18335

Эппле, Николай, 2020. Неудобное прошлое. Память о государственных преступлениях в России и других странах, М.: «НЛО».